

- 47 Որ եւ վըճուիւր յայնց գոլ անբուժելի,
Եւ միայն գեղջք տաժմամբ բըժրչկի
Կարել կեանս վարել միշտ ըստ հիւանդի,
Ապրեալ անձկութեամբ ի համառօտի:
- 48 Ձայս ինչ ի նոցունց Սարգիս իսկ լըւեալ՝
Եւ օրբստօրէ զինքն անգոր գրտեալ՝
Գրլնովին զիւր յոյս յաշխարհէս բարձեալ
Խորհէր զանանց փառս բարեաց խոստացեալ:
- 49 Արդ երբ փորձէր նա թէ աստ իւր վաղջան
Հասանելոյ էր ըստ վերին կոշման,
Որոշէր ունիլ զիւր մարմնոյն տապան
Յայս մեր հոյակապ սուրբ աղօթարան:
- 50 Ուստի վաղ ընդ փոյթ զիւր կրտակադիր
Ի վերջն յուլիսի ջընջեալ անձանձիր
Խորհրդածութեամբ, ուշիւ, կամօք ժիր
Գրբէր նոր կըտակ եւ եւս մեծածիր:
- 51 Որով կարգէր նա ընչից իւր ժառանգ
Ջեկեղեցին մեր՝ որ յայս իսկ քաղաք,
Ուր մըշտամատոյց հաստէր պատարագ
Վասն հոգւոյ իւրոյ ըստ իւր հին փափագ:
- 52 Ձորոյ տարեկան ըզպատարագիս
Ինձ ապրուստ կարգէր ըստ տեւեալ կենիս,
Գործեալ պարտական զիս յայս տաճարիս
Չօնել պատարագ վասն իւր յողջ տարիս:
- 53 Նաեւ իւր ընչիւք կերտել պատուիրէր
Ջաւագ խորան սոյն Եկեղեցւոյ մեր,
Ձոր յընտիր կրճոց յօրինել, ասէր,
Ի պատուանդանէն եւ մինչեւ ի վեր: